ՕՁՈՒՄ ՆՈՐԱՊՍԱԿ Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋԵԱՆ

Առաջնորդ Գուգարաց թեմի

Ծնվել է 1959 թ. մարտի 24-ին, Թուրքիայի Մալաթիա քաղաքում: Նախնական կրթությունը ստացել Կ. Պոլսի Ներսիսյան վարժարանում:

1969 թ. հայրենադարձվել է Հայաստան և բնակություն հաստատել Գյումրի քաղաքում:

1978 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան:

1979-81 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել ուսումը ճեմարանում:

1985 թ. ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. մարտին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ղուկաս Խարբերդցու թարգմանչական գործունեությունը» թեմայով:

1987 թ. հունիսի 7-ին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Նույն թվականին անցել է ծառայության Վեհարանում՝ որպես քարտուղար:

1987 թ. սեպտեմբերին Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նշանակվել է Հոգևոր ճեմարանի փոխտեսուչ:

1989 թ. նոյեմբերին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Պահքը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում» թեմայով, և ստացել մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

1990 թ. Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից նշանակվել է Օվեյցարիայի Ժնև քաղաքի հայ համայնքի հոգևոր հովիվ:

1991 թ. նշանակվել է Շիրակի թեմի փոխառաջնորդ:

1995 թ. հունիս ամսից զբաղեցրել է Մայր Աթոռի տնտեսության գույքագրման հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Նույն թվականի հոկտեմբեր ամսից նշանակվել է կառավարության կողմից Մայր Աթոռին վերադարձվող շենքերի, շինությունների ու հողատարածությունների ընդունման հանձնաժողովի նախագահ:

1996 թ. ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովում՝ որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ:

1996 թ. հունիսի 3-ից, Գարեգին Ա Կաթողիկոսի տնօրինությամբ, նշանակվել է Գուգարաց թեմի առաջնորդ: